Adobe Flash Player is no longer supported

ԲՋՋԲԱՋՁՁԻԱՆՅԻՆԻՆՏԻԵՆՐՏՆԵԵՐՏՆԵՏՖԻՔՖՍԻՎՔԱՍԾՎԱԾԿԱԲԵԼԱՅԻՆ ՏՎՀԱՄՎԱՁԿԱԱՐՐԱԳՅԻԻՉՆՆ ՀԵԱՐՄ ԵԱ ԱՆԱՍԱՍՍՐՈՒՄՆԵՐՈՎՀԱԵՑՈՒԱԽՈ

Նորություններ

Հայկական վիրտուալ համալսարանի առաջին դասախոսություններին մասնակցում են 150 ուսանողներ 22 երկրներից

+1 Recommend 0 Sha Share 0

//27.07.2009

Երեւան /Մեդիամաքս/. Հայկական վիրտուալ համալսարանի /ՀՎՀ/ առաջին դասախոսություններին մասնակցում են 150 ուսանողներ 22 երկրներից:

Adobe Flash Player is no longer supported

ՀՎՀ-ի ստեղծման նախաձեռնողը Հայկական բարեգործական ընդհանուր միությունն /ՀԲԸՄ/ է:

Ինչպես այսօր ՄԵԴԻԱՄԱՔՍ-ին հայտնել են ՀԲԸՄ երեւանյան գրասենյակում, ուսանողները 18-ից մինչեւ 82 տարեկան անձինք են Շանհայից, Ստամբուլից, Սիեթլից, Կիեւից, Հաագայից, Ամանից եւ այլ քաղաքներից:

Պարապմունքների ընթացքում ուսանողներին առաջարկվում է լսել 16 մուլտիմեդիային դասախոսություններ 6 լեզուներից մեկով՝ հայերեն, արեւմտահայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն: Համալսարանում դասավանդվում է հայերեն սկսնակների համար, արեւմտահայերեն սկսնակների համար եւ Հայաստանի պատմություն:

Դասերը սկսվել են հունիսի 14-ին եւ տեւելու են մինչեւ օգոստոսի 7-ը: Դասընթացի բոլոր ծախսերը ստանձնել է ՀԲԸՄ-ն:

Բացի շաբաթական պարապմունքներից, ուսանողները հնարավորություն ունեն օգտագործել մուլտիմեդիա ուսումնական գործիքներ. խնդիրներ, հանձնարարություններ, դասացուցակ, դասընթացի նկարագրություններ, հանձնարարությունների արկղեր: Ավելին, նրանք հնարավորություն կունենան մասնակցել քննարկումների, ստանալ եւ ուղարկել էլեկտրոնային նամակներ, չաթի միջոցով շփվել համակուրսեցիների հետ:

Ուսանողների աշնանային ընդունելությունը սկսվում է օգոստոսի 31-ից եւ տեւելու է մինչեւ սեպտեմբերի 14-ը: Ամառային ուսումնական շրջանի ուսանողներն ուսուցումը կարող են շարունակել աշնանային ուսումնական շրջանում, որի ընթացքում նրանց կառաջարկվեն մի շարք նոր առարկաներ, մասնավորապես՝ հայկական ճարտարապետության ներածություն:

Շահագրգիռ անձինք կարող են գրանցվել http://www.avc-agbu.org կայքում:

Կայքի հաճախորդները բաժանվում են երեք խմբի՝ վիրտուալ համալսարանի ընկերներ, գրանցված մասնակիցներ եւ ուսանողներ:

Աշնանային 9-շաբաթյա դասընթացները կմեկնարկեն սեպտեմբերի 22-ին: Ուսման վարձի մասին կհայտարարվի մոտ ապագայում: Միաժամանակ, եթե ուսանողը գերազանց հաննձի բոլոր քննությունները, նրան ետ կվերադարձվի ողջ գումարը: Գործելու են նաեւ զեղչեր սոցիալապես անապահով ուսանողների համար:

Recommend 0 Share 0

Վերադառնալ

Դիտումների քանակը՝ (3211)

Կարծիքներ

Հարգելի այցելուներ, այստեղ դուք կարող եք տեղադրել ձեր կարծիքը տվյալ նյութի վերաբերյալ՝ օգտագործելով Facebook-ի ձեր account-ը: Խնդրում ենք լինել կոռեկտ եւ հետեւել մեր պարզ կանոններին. արգելվում է տեղադրել թեմային չվերաբերող մեկնաբանություններ, գովազդային նյութեր, վիրավորանքներ եւ հայհոյանքներ: Խմբագրությունն իրավունք է վերապահում ջնջել մեկնաբանությունները՝ նշված կանոնները խախտելու դեպքում:

Adobe Flash Player is no longer supported

Adobe Flash Player is no longer supported

MEDIAMAX.am



ԱՄՆ դեսպանը «մեծ խանդավառությամբ» է սպասում Դիլիջանում միջազգային դպրոցի բացմանը



«Ընչող պատեր»՝ Երեւանի թիվ 132 մանկապարտեզում (ֆոտոշարք)



Շախմատի թիմային ԱԱ: Հայաստան- Ադրբեջան հանդիպումն ավարտվել է ոչ ոքի